

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 149-Ա

23 հունիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հունիսի 22-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝


- 1) «Լույսաս» ՍՊԸ, ք.Երևան, Դավիթ Անհաղթ 13/2 (ՀՎՀՀ 00000051).
- 2) Ա/Ձ «Ալվարդ Մաթևոսյան», ք.Երևան, Սարկավազի 44 (ՀՎՀՀ 80881813).
- 3) Ա/Ձ «Լուիզա Սարգսյան», ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 22/15 (ՀՎՀՀ 20153834).
- 4) Ա/Ձ «Սամվել Համբարձումյան», ք.Երևան, Սարկավազի 131-8 (ՀՎՀՀ 24206057).
- 5) Ա/Ձ «Մերի Սաֆարյան», ք.Երևան, Ռուբինյանց 41/1 (ՀՎՀՀ 23217708):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 23/06/20 16:24:53 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ